

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ ՍԿԻԶԲԸ


Խմբագիր
ԿԱՐՈ ԳԱԶԱՐՈՅԱՆ

Ursoliusstr
Sofp. թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 5-6

ԳԻՆ 10 ԼԷՎԱ

1 ՅՈՒՆՎԱՐ 1926



ՄԵՐ ԻՏԷԱԼԸ

ХОМЕНТМЕНЪ

ОРГАНЪ

НА

Спорт. Д-во „Хоментменъ“

Пловдивъ

Издатель: Д-р. Т. Томасянъ
Редакторъ: Г. Газаросянъ

HOEMENTMEN

REVUE ILLUSTRÉE

Organe de l'Union Arménienne
de Culture Physique et de
Scoutisme

Adresse: T. HÉKIMIAN
Philippople (Bulgarie)

ՆԵՐԳԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՃԻԳԻՆ
ՆՊԱՏԱԿԸ ՊԷՏԲ Է ԸԼԼԱՅ: ՍԱՀՄԱՆԷՆ
ԱՆԳԻՆ՝ ԻՏԷԱԼԸ ՄԻՋՈՑԻՆ, ԵՒ ԱՃՈՒՄԸ
ՍՊԱՈՈՒՄԻՆ ՏԵՂԻ ԿՈՒՏԱՅ:

ՅՕՒՈՒԱՆՆԵՐՈՒ

ԹՂԹԱԶՈՒԹԵԱՆ,

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ,

ալլ գուրբիւններու եւ

բերբերու համար

ինչպէս նաեւ

ԳՐԱՄԻ ԱՌԱՔԱՄԵՆ

ու վարչակազմ ալլ

գործերու համար հասցէ

ԹՈՐԳՈՐ ՀԷՔԻՄԵԱՆ

ՖԻԼՊՊԷ (Պուլխովա)

Հ. Մ. Ը. Մ.ի ՌՈՒՄԱՆԻՈՅ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒՅԵԱՆՑ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՍԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ ՅԵՏ ԱՅՍՈՒ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ „Հ. Մ. Ը. Մ.“ ՏԻՏՂՈՍՈՎ՝ ՓՈՒԱՆԱԿ „ՄԱՐԶԻԿ“Ի ԻՐԵՒ ՎԵՐՁԻՆԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՅԻՆԸ:



ՊԱՏԿԵՐԱԶՍՐԳ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ Հ. Մ. Ը. Մ.ԻՈՒՅԵԱՆ

ԳԻՆ 5 ԼԷՎԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

	Վեցամսայ	Տարեկան
ՊՈՒԼԿԱՐԻՍ	30	60 լէվա
ՌՈՒՄԱՆԻՍ	60	120 լէվ
ԹՈՒՐԲԻՍ	100	180 դրաչ
ԱՐՏԱՍՈՂՄԱՆ	10	20 ֆրանք
ԱՄԵՐԻԿԱ	1	2 ազլար

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

- ՀՐԱՆԷ ԷՄԲՐԵԱՆ — ՍՕՅԻՍ Բլոգաս Պանֆի քիւ 4
 ԹՈՐԳՈՐ ՀԷՔԻՄԵԱՆ — ՖԻԼԻՊԷ „Պանֆա Ապարեկ“
 ԱՐԱՄ ՔԻՒՐՏԵԱՆ — ՎԱՌԵԱ Ուլ. Թըսնովսիա 15
 ՆՈՒՊԱՐ ՉԱՔԷՐԵԱՆ — ՌՈՒՍՏՈՒԳ Տոնսուֆովա 71
 ԱՐԱՄ ՅԱԿՈՒԲԵԱՆ — ՊՈՒՐԿԱԶ Ֆեթիխանսովա 17
 ՊԵՓՐԵՄԵԱՆ — ՇՈՒՐԷՆ Արեհնիսիա չար 826
 ՅԱԿՈՐ ՊԱՂԱՊԱՆԵԱՆ — ՀԱՍՔՕՎՈ
 Գ. ՄԱՀԱԿԵԱՆ — ՍԼԻՎԷՆ Չասովնիֆար
 Գ. ՆԱԶԱՐԵԱՆ — Արմէնաքո աշխիշիլի — ՍԹ. Չախորա
 Պ. ՓԱՓԱԶԵԱՆ — Թ. ԲԱԶԱՐՃԸԳ Թանկո Վանստասուն
 ԹԱԳԻՈՐ ԳՈՒԶԵԱՆ — ՊՈՐԻՍՈՎԿԱՐԱՏ

Անոնց պէտք է դիմել բաժանորդագրուելու համար

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է

„Մարզիկ“ ի Ա. քիւր ամբողջովին սպասած եւ արտասն-
 մանի բաժանորդներու կողմէ պահանջուած բլլալով, բոլոր անոնց
 որոնք ունին Ա. քիւր եւ հաւաքածոյ չեն պահեր՝ հանկին քիւրիս
 վարչութեանը դիմել :



ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ ՍԿԻԶԲԸ

Խմբագիր
ԿԱՐՍ ԳԱԶԱՐՈՍԵԱՆ

Արտատպիչ
Տօֆ. Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 5-6

ԳԻՆ 10 ԼԷՎԱ

1 ՅՈՒՆՎԱՐ 1926

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

ՈԳԻՆ ՈՒ ՃԱՄԲԱՆ

Առ ուղեկալէս մանկութեան կամ երիտասարդութեան, ու անոր ազգայն յոյսերուն նախընտրած տան մը նկատեր են Ամանորը:

Բայց առանձնապէս հայեցի հայեցողութեամբ անկեա իր մէջ աչլեւս դասնայնող բան մը ունի, կարծէք: Մեզի համար, մանաւանդ, որ կեանքը իր դժբախտ կողմերով միայն ճանչցանք, գրեթէ անկարելի է ամբողջովին վաղուան՝ նոր Օրերու նայիլ, այնքան խոր է կսկիծը անցեալի հարուածներուն:

Սիրտ-ձախող էջեր ունի մասնաւորապէս վերջին տասնամեակի մեր պատմութիւնը, որ նստապատմութիւնը եղաւ մեր այսօրուայ հայ երիտասարդութեան:

Ինչքան ալ կսկիծուն, քանի մը դիմերով վերջի՛չնէք զայն:

1908—1914, — յոյսեր և օրօրումներ, ծախ ու ծիծաղ, բայց, նորէ՛ն, «արխանհոս երազներ»:

1915—1918, — Զարդ ու սարսափ, յեղակարծ ամաչութիւն մը՝ սահմանէ սահման, անփոխարինելի կորուստներ, և ծուխ ու մուխ՝ տանց ծխանի ու խարսկի...:

1918—1920, — «Մեր Հայրենիք», վերածնունդ, համբանք, տան-տեղ, քաղց, արքայան սոխատանքներ, ու նորէ՛ն խուճապ, փախուստ, խորտակում:

1920—1925, — Խաղաղութիւն: Նոր աշխատանքներ, բայց հաշար ցաւ ու կսկիծ, և պայքայուած անասութիւն մը՝ ա՛փ մը իւզով, հա՛ցիւ բաւելի՛ մենք մեղմով տապալակելու:

Ասդին, ծովերէ ծով, շուտուն, թախտկատ, այլեւս ու հիւժո՛ղ-լղորձուն բողմութիւններ՝ իր-րե «գաղութ», զուրկ կապէ ու ներդա՛նակութիւնէ:

Եւ, — չարագո՛յնը — ֆիզիքական վտանգը դարանակալ՝ Մայր-երկրի շուրջ, իսկ գաղութներու մէջ «ճերմակ ջարդը» իր յարածուն կլանումով:

Այ՛ է, մեր երէկուայ և այսօրուայ պատմութիւնը:

Վա՛ղը, — Անտոյդ, խուլ ու մթամած:



Բայց, ս՛ւր կը տանի այս տրեւտար ճամբան: Երէկը արխն կը կաթկթէր, դե... Վաղը, ապագան, զայն ու թախչք չունի...

Ե՛լքը:

Փնտռենք զայն կրկին մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Թողունք Աւսրայրն ու Արսրան, կամ ցեղին դիմադրուող ուժը:

Արնաւիրքի ու խորտակումի վերջին շրջանին մէջ իսկ մեր ժողովուրդը խոյանքներ ու ճիգեր է ունեցեր, որոնք լքեր-անցեր են մարդկային երեւակայութիւնը: Այսօրուայ պայմանները, թէև անդամաւոր ու անբաւարար, բաւակա՛ն են՝ ինքնախոստ ու շլապինդ նայելու համար նոյ օրերուն:

Եթէ անցեալը հող ու կսկիծ տուաւ մեզի՝ հիմնական փոփոխութիւն մը դրաւ, սակայն, մեր կենցաղին ու խոտնաւորին մէջ: Եւ տասնամեակը, արխանների ու տիրաւանիլ թէև, խտրեց ու լքեց մեզ, արժասացած երաշխտութեան մը տեղ կեանքի մասին իրատես ու ինքնավստահ հասկացողութիւն մը տալով: Երէկ, — և այս տասնակ տարիներ — քարեմիտ ու պարտաւոր էինք: Այսօր դարձեր ենք մտածող ու հաշուող: Երէկ յոյսի ու քաղձանքի, հեռուոր ու անզոյ երաշխար ժողովուրդն էինք: այսօր դարձեր ենք իրողութիւններու և սեփական ճիգին ապաստանող տաշք մը: Ընչէ է, որ մարդկային պատմութեան մէջ անարինակ եղաւ մեզի վիճակուած աղէտը: Բայց անոր պատճառը պէ՛տք է փնտռենք նախ հայ ժողովուրդի թերի կողմերուն մէջ: Եթէ չարիքը նիւրբեղեն ու մարդկային անհամեմատօրէն մեծ արք

ժէքներ խլեց մեզմէ, դոյն լրացուց բարոյական նոյնքան մեծարժէք փորձառութեամբ մը: Տարեմուտի այս օրերուն մանաւանդ, երբ կոչուած ենք մեր կեանքին «խլքի ու մուտք» ի արդար հաշուեկշիւը ընելու, չէի մոռնանք և՛ այս «չաճը»: Որովհետեւ, զժրջախառութեան մէջ իսկ բարեբախտութիւն — փորձառութիւն — զանելու այս դրական կեցեւածքը զգալապէս պիտի նուազեցնէ Յաւին մեծութիւնը և պիտի ամբապնդէ մեր հաւատքն ու անկէ բխող ճիգը, անկարելին դարձնելով դժուարին:

Ի՞նչ փոյթ, եթէ երեկուայ անփոխարինելի կորուսաներէն յետոյ, սահմանէ սահման մեր այսօրուայ անհաղարդ ու ցիրուցան պայմաններուն մէջ, և մեր անստոյգ վաղուան նախօրեակին, վաստճ ու հեատապա պիտի զգանք ինքզինգնիս: Սխառանքին մեծութիւնը չէ, որ անկարելի պիտի ընէ անոր իրականացումը: Հիներէն եկող սւանդութիւնը, և անոր հետ հոյակապ ժառանգութիւն մը բաւական են նւիրական ու հաճելի դարձնելու՝ զժուարութիւնները հարթելու մեր աշխատանքը:

* * *

Արդէն իսկ սթափած ու խոնական, այլևս նոր սերունդին համար պէտք է հիմնաւորենք իսեալ մը, որ բխի հայ ժողովուրդի խորքէն ու աւանդութիւններէն: Եւ եթէ պայման է, որ նոր Տարին վաղուայ մեր ակնկալութիւնները արժեցնէ, ջանքեր նախընտրել միջոցները, գործը՝ երեւոյթէն, և կարեւորը հաճելիէն գերադասել պիտանալով: Որովհետեւ, իրականին մէջ թուականները չեն, որ պիտի ճշդեն նորուքիւնը: Մարդկութեան, բայց մանաւանդ հայ ժողովուրդի համար, սարիները միշտ մնացեր են նոյնը: Մենք ենք որ, միամիտ ու լաւատես, ամէն մէկ ամանորի մէջ պատրանք մը սիրեր ենք զնել, մինչ Չարիքը ընդդական կամ մարդկային, յարատեւօրէն քալեր է օրերուն հետ: Աւելցնենք, թէ նոր տարիէն չէ, որ պէտք է ակնկալենք, այլ մենք պէտք է ստեղծենք մեզի հարկ եղածը մեր պանանջը պատշաճեցնելով մեր ուժերու դասադրութեան: Եւ այս ինքնապատահ հասեւորութեամբ, մենք ստեղծած պիտի ըլլանք, նաև, մեր իրական նոր տարին: Կթոտած, ուժասպառ, հոգնաբեկ, բայց հաւատաւոր՝ ժպտելով դիմադրաւել բուրդը զժուարութիւնները: Դազապին ու հարսանիքին թափօրները միշտ միասին քալեր են մեր բովանդակ պատմութեան մէջ: Ներշնչուինք այդ աւանդութիւնն, և բոլոր արտաքին ձեւերէն անկախ, ջանքեր մաքուր ու վառ պահել հիներու ոգին: Երէկը՝ փորձաքար մը և ներշնչարան մը թող ըլլայ և այսօրը՝ նուիրումի օր մը, որպէսզի վաղը անպայմանօրէն յաջողութեան օր մը դառնայ: Ինչպէս հին, աւանդական օրերուն՝ մեր նահապետական օձախներէն ներս, այսօր ալ բախերիկն ու կայծը վառ պահենք մեր երգիքներէն ու հոգիներէն ներս: Աւելի վերջ ճարձատու մը և ստեղծագործութիւնը ինքնին կը ծնին: Հերթը է որ ժառանգական կայծը, ջանանք անշէջ մտայ մասնաւորապէս երիտասարդութեան մէջ:

Սկսող տարին: Ա՛ն ալ պիտի անցնի, ինչպէս իր բոլոր նախորդները: Ու մենք պիտի մնանք նորէն անողոք կեանքին հետ դէմ առ յանդիման: Եւ ոչինչ այնքան արէտաւոր պիտի ըլլայ հայ ժողովուրդին համար, քան ջերմութենէ աւ խոշալէ գուրկ սերունդ մը:

Բախերիկը վա՛ն և հիմնաւորուած խոշալ մը, — ա՛յս թող ըլլայ մեր նոր տարուայ կոչումը:

Կ.



Անկալի օրեհն

Հ. Մ. Ը. Մ. ի վերջին Լ՛նդհ. Պատգ. ժողովը Պոլսոյ մէջ

In corpore sano, mens sana
ԱՌՈՂՋ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ ԱՌՈՂՋ ՀՈԳԻ

Մէթոսիկ մարմնակրթանքը — իրեն նպատակ ունի ուղղել կեցուածքը, ներգաշնակել շարժումները համաձայնեցնելով դանոնք խմբական գործադրութեանց մէջ ու զարգացնել մարմնին տոկունութիւնը:

Մարմնին այս ուղղութեամբ պատրաստութիւնը կ'ազդէ հոգիին վրայ, զարգացնելով զեզարուեստածաշակը, ինքնավստահութիւնը, համարձակութիւնը ու կարգապահական սղին:

Հայ երիտասարդները կազմակերպուելով սոյն նպատակներով, կ'անջատուին փողոցի անբարոյացօցիք մթնոլորտէն, կապ կը հաստատեն իրարու հետ, իրարու կը մօտենան, զիրար կը ճանչնան, կը շեշտեն ու կը խորացնեն իրենց ազգային, լեզուական, տանձային ու կրօնական մասնայատկութիւնները: մէկ խօսքով, կը դառնան աւելի հայրենասէր, հայրենասիրութեան մաշուր առումովը:


Մարմնակրթական զուտ կազմակերպութեան վրայ եթէ աւելցնենք հայ պատանիներու սխուրական կազմակերպութիւնը, որուն նպատակն է մշակելու զարգացնել ամենաթարմ տարիքէ սկսած հայ մանուկին սրտին մէջ մարդկային ամէնէն ազնիւ զգացումները, — հայ երիտասարդութեան Հ. Մ. Ը. Մ. ի չուրջ կազմակերպութիւնը կը դառնայ այլևս շարժում մը, որը

խորացնելով հանգերձ ազգային ինքնախօսկցութիւնը հայ երիտասարդ հոգիներու մէջ, միանգամայն հաշորդակից կ'ընէ զայն համամարդկային մեծ խոթանքին իրականացման ձեռնարկին:

Այս առաջադրութիւնները պէտք է որ նպատակը կազմեն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան ու վստահ եմ, թէ ա՛յդ է առաջադրուած նպատակը: Առ նկատի առնելով վերջին տարիներու միջոցին մեր ազգին մարմնական ու բարոյական տարապայման ու մասսպատումը, կարելի է երևակայել այն անազին դերը: որը սանձմանուած է հայ երիտասարդութեան սոյն կազմակերպութեան մանաւանդ գազութիւններու մէջ, ուր այնքան բազմաթիւ են մեր տանձային այլաբերումի վտանգները: Բայց, ... Caveant consules! (Առաջնորդներ, աջալուրջ եղէ՛ք): Չըլլայ որ կուսակցականութեան մանրէն թափանցէ ձեր այնքան գերեցիկ կազմակերպութեան մատուց մարմնոյն մէջ, որովհետեւ այդ պարագային քայքայումը անվերջ պիտի նետէ ձեր այնքան ազնիւ ներշնչումներով սկսած գործը մեր անցեալի շատ մը օգտաշատ ձեռնարկներուն աւերակոյտին մէջ:

Ազդողւում ու արդիւնաւոր գործունէութեան մասին անկեղծ ու սրասգին մաղթանքներս կ'ուղղեմ Հ. Մ. Ը. Մ. ին նոր տարուան առթիւ:

Առօրինա Լ. Մ. ՃԵՐԱՀՅՑ



Յինադադարի Երջանին Քուլէլիի որբանոցին որբ-արիներէն մաս մը, իբից Հայաստան մեկնումին առթիւ որբանոցի ուսուցիչներու քնկերակցութեամբ

Բժիշկին գրեկն փրցուած էօր

ՄԱՆՁԵՐՈՒՆ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Հիմա որ սևերուս վրայ տակաւ կը զգամ տարիներուն ծանրութիւնը, ու ձեռքիս դրիչը՝ երբեմն փետուրի պէս թեթեւ՝ այժմ մահուան բտերուն մէջ կը կապուի ու կը շփոթի, կը յիշեմ հի՛ն հի՛ն օրերը, այն օրհնեալ օրերը, երբ սեղեղիս, ջիզերուս, մարմինիս բոլոր բջիջները այնպէ՛ս լեցուած էին կեանքով՝ ու մահուան գաղափարին համար սեղ չէր մնացած...:

Երջանիկ տարիք, ուր կեանքը կ'ուսոյ, սիրտը կը զեղու, հոգին կը պստթկայ:

Ու ս'ի կրնայ մտնալ հազար անգամ կրկնուած անունը այն պաշտելի ընկերոջ՝ որ միանգամայն դասակիցը էր, տարեկիցը ու սրտակիցը, երեսակայական վէպերուդ հերոսը, հրաշալի արկածախնայութիւններուդ հեղինակը:

Արամն էր իմ զինակիցս: Միտին կը խողացինք, միտսին կը սերտէինք, միտսին կը չախուէինք: Երբ ան հետուի աղբիւրէն ջուր բերելու կ'երթար, ե՛ս ալ հետը կ'երթայի սախոք մը ուսիս: Երբ ես թռչուններուն թակարդ լարելու կ'երթայի՝ դաշտերը, ան ալ հետս կ'ազար, սուտ սուլոցներով զերենք հրաւիրելու:

Ու ի՛նչ չարութիւններ չէինք ըներ միտսին: Երկու թիթեա մէկ լուցկիի գամելով՝ դատարանին մէջ թացնել, մեղաւեհուան թեւերը փետակելով՝ լարի վրայ խողցնել: Ծանծի գլուխներ ձգմելով՝ զրքերը դարդանկտրել, աղաց բերանը շարք մը սալով՝ ակտաները փրցնել...: Կաւ կը յիշեմ որ օր մը այլ մկնիկ մը լուցկիի սուփի մը մէջ մոցնելով չարս թափիները չորս ծակերէ դուրս հաննցինք ու աղատ արծակեցինք: Երբ գիրուկ դասատուն ու բոլոր աշակերտները սեռան որ փոքրիկ սուփի մը որանին մէջ ինքնիրեն կը վաղվէր խենթի մը պէս՝ ամէնքն ալ սարսափահար դուրս խոյացան...:

Անանու՛ն Ազիտականներ՝ որ մեզ կ'խառնուածներու պէս յարգել կուտային զարոյցին մէջ: Ըխտողային չարութիւններ՝ որ մեզ հրեշտակներու պէս կուրսխայնէին...:

Աւա՛ղ, օր մը կուգայ ուր մեծագոյն տաքիտութիւններն անգամ չեն կրնար այս պղակի շարածծիտութիւններուն չափ ու բախայնել մարդկային սիրտը...:

Եւ սակայն չկարծէք որ մեր երջանկութիւնը անխառն էր. ս'ն, ս'չ: Կատարեալ մարդ ըլլալու համար զլխաւոր բան մը կը պակսէր մեզի՝ պիտն ու մօրուքը: Ու ըսն'լ որ, բուսնելու՛ն պէս կ'ածխէինք...:

Օր չէր անցներ որ զարոյցին ծառին տակ, ձեռունի կոճկին վրայ հասակնիս չը չափէինք, մասերնուս ծայրին վրայ բարձրանալով, ու զմեկի խորգախ հարուածով մը չճեղքէինք կոշկուած կեղււր՝ իրբև չախանիչ:

Սակայն հիմա որ տարիներն ու մահը մեր մէջ ամէն մրցում ի սպա՛ն ջնջեցին, ինչո՞ւ չ'ստոտալանիմ որ, ան ինձէ՛ հասակով ալ, ս'ժո՛ղ ալ, ճար-

տարութիւնով ալ, չարութիւնով ալ միշտ գերազանց էր:

Լալալու մէջ իր նմանը չկար: Պայքարի մէջ մէկ, հատիկ էր: Երբ ամէն Զատիկ, Մնա՛նդի յոյն զարոյցին ալոց գէ՛մ կտուի կը բնուէինք սաղմական շարքերով՝ ճակատ ճակտի, քարերը է՛ն շիտակ ու է՛ն հետու թացնալը միշտ ինքն էր: Մեզի համար ամբողջ գիւղին մէջ Աղգին պատիւը փրկուէն ան էր միայն:

Վա՛յ եթէ իր ճամբուն վրայ չուն մը հաջեց երևք օր չանցած այդ չունը պիտի անհետանար:

Չէ՞ որ անգամ մը իր թռչնիկը փարատալ կատուն աշտարակի մը գողաթէն կ'օթն անդամ վար նետած էր, միշտև օր եօրը հողիներն ալ խնդին բերնէն դուրս գային:

Միլիթրի այդ աշտարակը ճիշտ մեր տան դէմն էր, բարձր ու խորխուլ միլնաթէ մը՝ Յունական հին մեհակնի մը վրայ թառած. մեհակնը դեռ կանգուն է՝ միլնաթէն փլած...: Հո՛ն կ'աղօթէր երբեմն բժշկութեան մայր-սատուածք, հիմա բուերն ու դեւերը կ'իշխեն հոն: Գիշերը սարսափը կը լեցնէ այդ պատերը, ու լուսինը այդ սակարակներուն լեզու կուտայ՝ կ'ըսեն...:

Արամ՝ այդ դեւերն ալ արհամարհեց: Գիշեր մը աշտարակէն ներս սուլաց, խաւար ու գարձգարձիկ սանդուղներէն սկսաւ բարձրանալ խորխախլով, պատերը չոյելով, սաները արիւնելով: Երբոր գաղաթը հասաւ, չունը բանց, ձեռքն երկնցուց: Վերը անգլերը սեռան այդ կայծր ու կտուցի տակալի հայուածներ տեղացուցին իր ոչերուն:

Իր գէ՛մքին վրայ միշտ մնացին այդ վէրքի սպիները: Սակայն աչկութիւններ կան որ զեղեցկութեանն աւելի կ'արժեն...: Այդ օրէն ի վեր գիւղին հերոսն էր Արամ:

Քանի՛ քանի՛ անգամներ ալ լիլներու գարոցն կը կանչէին զայն՝ փարձուհիին դասաղիրք մը տանելու, աշակերտներուն մարմնամարդ մը ցուցնելու, սրտաբուսկով: Եւ սակայն՝ այս պատանին որ անգլերը կը փետէր ու մանչերը կը ծնէր, աղջիկներու առջեւ տղու մը պէս կը դողար ու մեղաւորի մը պէս կը կարմրէր...:

Եղբրը իրեն համար արտակարգ, բացառիկ, անբնական, անկասելի էակներ էին: Մայրիկը՝ իր փոքր հասակէն մեծած ու իր բոլոր եղբայրներն ալ արուրլլալուն՝ Մանչալնց կը կոչուէր իրենց տանը: Բուլորն ալ միեւնոյն փայտէն աշուած՝ ու մեզ ու չքեղ պատանիներ էին, — գիւղին փառքը: Բայց բոլորն ալ Արամին պէս չաւարած, ամչկատ, ախտաբէն զգոյնութիւն մը ունէին: Կիները միայն հետուէն սեռած ըլլալով՝ ձեռքի սեղմում մը զինաթափ կ'ըներ զիրենք...:

Արամ քանի՛ կը մեծնար՝ ա՛յնքան կը տկարանար: Եկեղեցիին մէջ երգած սանն ձայնը կը փոխուէր զարոյցին մէջ պատասխանած սանն միտքը կը խաւարէր. գիրք մը կարդալու պահուն՝ էջը չգարձուցած՝ կարգացածը կը մոռնար:

Տղոց մէջ սարսամօրէն կը փոխային որ «ամօր բաներ կ'ընեն», «պնածուծը հատեր է՛»...:

Օրեր կային որ քովը չէր մօտեցուեր, այնքան

յուստեան, դատան, զայրացիտ կ'ըլլար. բռնած բանը կը կոտորէր:

Սակայն իր մտաւորական սյօքը կորսնցնելէ վերջ՝ քիչ քիչ իր մարմնական ատաւելութիւններն ալ անհետացան: Մտերը փրցուած Սամսոնի մը պէս՝ սրմանշուկ, դողդոջուն, շուարած բան մը եղաւ: Այտասկերըը սցուեցան, աչքերուն ծիրը կապարի գոյներ սուսցաւ:

Ու չգոնուեցաւ մէկը, ո՛չ քանանան, ո՛չ վարձապետը, ո՛չ հայրը, ո՛չ իսկ բժիշկը, որ այդ աղէտ պատանիին բացատրէին թէ այդ մենուսը ու մեղաւորը դրասանքները զինքը վերեւման կը տանէին...

Արևատ օր մը, գոնգաղտէն, ժայտբուն գազաթը գացիէք միտսին: Յանկարծ զբարոնէն արծաթէ խոչոր դրամ մը հանեց ու ձեռքի լացն շարժումով մը ծովը նետեց զայն: Արծաթը վայրկեան մը փայլեցաւ արևուն տակ, յետոյ անդունդին մէջ կորսուեցաւ ու սղախի ճաղիւն մը հանեց:

— Ասիկա տասներորդն է որ հօրմէն գողցայ, բաւ, ծովը նետելու համար...: Իւրաքանչիւր փորձութիւնն այդպէ՛ս կ'ուղիմ պատմել. բայց կը զգամ որ ո՛ւշ է արդէն, կամքը մեակեր է մէջս, ա՛լ թագաւորի գանձ մը իսկ չպիտի բաւէ այս ծովը լեցնելու...:

Ասիկա մեր վերջին սրոյտը եղաւ ու մեր վերջընիներ խոսակցութիւնը:

Աբրամ անկողին ինկաւ ու ա՛լ չ'եկաւ:

Մեր ծնողները մեզ արդիւնքին իրեն աչցելել: Գիւղերու մէջ ուր զիտութենէ աւելի բնագղը կը տիրէ, հո՛ն ուր բժիշկի ոտքը կը կոխէ, քարեկանները իրենց ձեռքը կը քաշեն՝ անասնական ինքնապաշտպանութիւնով մը: Ու ընտանիքը ի՛յ ցուին մէջ կը կծկուի, միացնակ կը մնայ իր հիւանդին հետ՝ որ յաճախ ամենատարական զգո շութիւնն իսկ չ'ունի իր սիրելիները չվարակելու համար...

Ամիսներով տարտամ շշուկներով բաւականացայ:

— Երէկ գիշեր նորէն բժիշկ կանչուեր է...

— Քապերով արիւն փոխեր է...

— Փոքրիկ եղբայրն ալ անկողին ինկեր է... Օր մը, սակայն, ծնողքէն դադոնաբար, իրենց տանը մտայ, ու վախն ի վախ սանգուխներէն վեր կայ:

Հիւանդին սենեակէն բժիշկը դուրս կ'ըլլէր: Լէնտանիքին անգամները զայն պաշարեր էին երկիւզած ձեւերով:

— Ոտքդ պահե՛մ, բժի՛շկ, կ'ըսէր ձերունի հայրը գոչալով...: Յոյսի բա՛ն մը տուր մեզի:

Բայց ան ճակատաչքովան կտրուկ շարժում մը ըրաւ:

— Ամէն ցու վախճան մը ունի, բաւ:

Բժիշկէն վերջ չուտով զիս զրկեցին քանանան կանչելու: Տէրտէրն ինձի խաչ մը ու գիրք մը տուաւ, ու խնդրեց որ հետն երթամ, վախն ու վառութիւնը սիրտս լեցուցին:

Ես այն ատեն դեռ չէի տեսեր թէ ինչպէս կը մեռնին մեր թուճաւորած շուները՝ ստլաչտոսակները խածնելով, կանգնելով ու իջնալով, դողալով ու պաղատելով...

Սակայն այդ օրը սորվեցայ ինչ որ բոլոր բժրը-

կական կանառները չ'ուղեցին սորվեցնել՝ թէ մարդ մը անասունի մը պէս չի՛ մեռնիր...

Հոն՝ ուր Գիտութեան մարդը յոյսի փոքրիկ բառ մը անգամ չէր դասձ քսելու՝ կրօնքի պաշտօնական հաւատքի անձուն պաշար մը բերեր էր իր մագաղաթի զրքին մէջ: Հո՛ն ուր բժիշկը կեանքը կը չափէր ու կը կարէր՝ չո՛ր ձեռով մը, քանանան յախտնական կեանքի անձայրածիր հորիզոններ կը քանար՝ օրհնական շարժումով մը: Ու երկու հազար տարիներէ ի վեր կրկնուած իր բասերն՝ մի՛ շոտ նոյն գաղտնիքն ունէին սակեղծելու այն վերջին ժամերը, ուր գիտաղէս, ամէն յոյս, ամէն հաւատք, ամէն սէր, ամէն իրականութիւն ու ամէն երազ կը սնանկանայ, կը մեռնի, կը փախ: Գեղարքո՛յն պարտութեան ժամուն՝ զերարո՛յն յաղթութեան խարկանքը:

Նարկա՛նք թէ իրականութիւն, չե՛մ գիտեր: Սակայն այդ օրէն ի վեր համոզուեցայ թէ սրքան տանն որ մարդերը պիտի մեռնին՝ ա՛յնքան ատեն պիտի ազրի նաև կրօնքը:

Արդարեւ, քանանային մակնելէն վերջ, աննիւթական շնորհ մը իջած էր արդէն հիւանդին գէժքին վրայ: Անկողնին մէջ նստաւ, ձեռքը ձեռքերուս մէջ դրաւ, ու խօսեցանք իրարու հետ՝ հի՛ն օրերուն պէս:

— Ինքզինքս երբէ՛ք այսքան լաւ չէի զգացած, բաւ...: Վաղը եթէ արեւ ըլլայ՝ կ'ուղե՛ս որ միտսին դաշտ երթանք պտուելու...:

Յետոյ, յանկարծ լսեց, ականջս լարեց, տըժգունեցաւ:

— Կը լսե՛ս, բաւ, իրիկուան գանգակն է...: Կը յիշե՛ս, ամէն անգամ ես կը զարնէի մեակին գանգակները...: Օր մը երբոր ի՛մ կարգս ալ դաս, կ'ուղե՛մ որ դուն զարնես ինձի համար: Բայց այնպէս ուժով քաշես պարանը՝ որ արար աշխարհ իմանայ...:

Սակայն ի՛նքն ալ, ե՛ս ալ, այնպէս համոզուած էինք որ այդ օրը երբէք պիտի չգար...

Հեռուեալ օրը՝ գարնանային զմայլելի օր մը՝ ընդհատ ընդհատ զողանջ մը փրթաւ օդին մէջ:

— Հըրե՛ն կայ, մայրի՛կ, բաւ...

— Շուտով չապիկդ առ ու ժամ գնա, տղա՛ս, Աբամը մեակեր է...:

Մեակ՞ ք է...: Մեակ՞ ք է...: Կենթի մը պէս վեր վաղցի, փոքրիկ խուցի մը մէջ բանտուեցայ, դուռները գոցեցի, պատուհանները խցեցի՝ այդ ընդհատ ընդհատ ու անընդհատ զողանջը չիմանալու համար...:

Սակայն ի գու՛ր: Գիւղական գանգակը ամբողջ տարին ինձի համար լացաւ:

Ընտանիքներ կան որոնց անգամները՝ խաղի թաղթերու պէս իրարու ետեւէ կ'իջնան: Սակայն վարակումը հնձեց այդ դեռտոսի կոտիճները: Մահը փակեց այդ տան դուռը: Ու մի՛նչև այսօր, գիւղի պատանիներուն կը ցուցունեն մանչերու գիտեցմանը:

Ռ. ՍԵՒԱԿ
Լոզան 1913 (Տօր. Ռուբէն Զլիկլիբեան)

